

**Թռչնաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման
կատարելագործման և տնտեսական արդյունավետության
բարձրացման ուղիները Արցախի Հանրապետության
Մարտունու շրջանի «Լուսակերտ» ՍՊԸ-ում**

*Հարությունյան Սուսաննա
Հարությունյան Բրենա
Բարսեղյան Լյուդմիլա
Դուլիսանյան Նելլի*

*Հանգուցային բառեր. աշխատանքային ռեսուրսներ, աշխատանքի
արտադրողականություն, մթերատվություն, համախառն արտադրանք,
համախառն եկամուտ, շահույթ, զուտ եկամուտ, շահութաբերության
մակարդակ*

Նախաբան

Հասարակության տնտեսական առաջընթացի հիմքը հասարակա-
կան արտադրության արդյունավետ կազմակերպումը և տնտեսական
արդյունավետության բարձրացումն է:

Արտադրության կազմակերպումը ուղղված է արտադրական
ռեսուրսների առավել ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանը: Իսկ
արտադրական ռեսուրսների լրիվ և արդյունավետ կազմակերպումը
շուկայական տնտեսության պայմաններում խիստ կարևոր է, քանի որ
արտադրվող արտադրանքի տեսականին և ծավալները որոշվում են՝
հիմք ընդունելով առաջարկը, պահանջարկը և կազմակերպության ար-
տադրական ռեսուրսները:

Թռչնաբուծության զարգացումը կարևոր դեր ունի Արցախի տնտե-
սության զարգացման գործում. այն կարևոր նշանակություն ունի երկրի
արտաքին ու ներքին ապրանքաշրջանառության մեջ:

Հաշվի առնելով թռչնաբուծական արտադրանքների արտադրության
կարևորությունը՝ ներկայումս հրատապ է թռչնաբուծական արտադրան-
քի արտադրության կազմակերպման կատարելագործումն ու տնտեսա-
կան արդյունավետության բարձրացումը:

Հոդվածի հետազոտության նպատակը ԱՀ Մարտունու շրջանի
«Լուսակերտ» ՍՊԸ-ում թռչնաբուծական արտադրանքի արտադրության

կազմակերպման կատարելագործումը և տնտեսական արդյունավետության բարձրացումն է:

Առաջարկված նպատակին հասնելու համար կարևոր է հետևյալ խնդիրների լուծումը.

- բացահայտել թռչնաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման կատարելագործման և տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները,
- վերլուծել ընկերության թռչնաբուծական արտադրանքի արտադրության ներկա վիճակը,
- բացահայտել թույլ տրված բացթողումները, ներկա պայմաններում թռչնաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման և տնտեսական արդյունավետության անկման պատճառները,
- մշակել ու հիմնավորել ընկերության թռչնաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման կատարելագործման և տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները:

Հետազոտության մեթոդները

1. Մարտունու շրջանի «Լուսակերտ» ՄՊԸ-ն արտադրատնտեսական գործունեության համառոտ բնութագիրը

ԱՀ Մարտունու շրջանի «Լուսակերտ» ՄՊԸ-ը կազմավորվել է 2002 թ. փետրվարին:

Կազմավորումից անմիջապես հետո սկսվել են հիմնական միջոցների՝ շենքերի ու սարքավորումների վերանորոգման և վերականգնողական աշխատանքները: Պատրաստի արտադրանք է սկսել թողարկել 2002 թ. մայիս ամսից:

Ընկերությունն աճեցնում է ROSS 308 տեսակի բրոյլեր թռչուն. ունի ինկուբացիոն կայան, թռչնի աճեցման համար նախատեսված վեց թռչնանոցից բաղկացած արտադրական գոտի, կերի և ապրանքային պահեստներ, համակցված կերի պատրաստման արտադրամաս, մորթի արտադրամաս, պատրաստի արտադրանքի պահպանման և պահեստավորման սառնարանային տնտեսություն, իրացման բաժին, կաթսայատուն ու տրանսպորտային սեփական ծառայություն:

Ներկայումս ընկերության արտադրանքի տեսականին թարմ և սառեցված վիճակում կազմում է 41 հատ՝ ամբողջական հավ, կտրտված վիճակում թռչնի տարբեր մասեր, ապուխտներ, կիսաֆաբրիկատներ, հավի մսից նրբերշիկ, թռչնի ենթամթերքներ և այլն:

Ընկերության արտադրանքը իրացվում է ԱՀ և ՀՀ տարածքում: Առևտուր իրականացնող կազմակերպություններին արտադրանքը մատակարարվում է թարմ և սառեցված վիճակում՝ ընկերությանը պատկանող հատուկ կահավորված (այսինքն՝ սառնարաններ տեղադրված) «Ֆորդ» մակնիշի բեռնատար ավտոմեքենաներով:

Ընկերությունը ԱՀ Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում, ՀՀ տարածքի Կապան քաղաքում ունի ֆիրմային խանութներ, որտեղ մասնաճեղքի մատակարարումը թարմ և սառեցված վիճակում կատարվում է ամենօրյա:

Մորթի արտադրամասի աշխատանքի վարձատրությունը գործարքային է, իսկ մնացած աշխատողներինը՝ ժամավարձային:

Ընկերության արտադրական ստորաբաժանումները հիմնականում ապահովված են ժամանակակից սարքավորումներով, որոնց շնորհիվ աշխատանքները հիմնականում մեքենայացված են:

Ելնելով թոչնամսի շուկայի (ԱՀ և ՀՀ տարածք) իրավիճակից՝ ընկերությունը չի աշխատում իր արտադրական հզորությունների լրիվ ծանրաբեռնվածությամբ:

Ընկերության ինկուբացիոն կայանում հնարավոր է միաժամանակ ինկուբացիայի ենթարկել երեք խմբաքանակ ինկուբացիոն ձու՝ այսինքն, միաժամանակ համալրել երեք թոչնանոց, բայց դրանցում աճեցված թոչուններից ստացված արտադրանքը հնարավոր չէ իրացնել շուկայի սահմանափակ լինելու պատճառով:

Ընկերությունը էլեկտրաէներգիա է ստանում երկու տարբեր էլեկտրամատակարարման գծերից, լրիվությամբ գազաֆիկացված է, ջրամատակարարման համար ունի սեփական արտեզյան ջրհոր, 600 տոննա տարողությամբ երկու ջրավազան, բացի դրանից՝ ջուր է ստանում նաև «Զրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ-ից:

Ընկերությունը զբաղեցնում է 12,5 հա արտադրական տարածք՝ Մարտունի քաղաքից 3 կմ հեռավորության վրա, էկոլոգիապես լրիվությամբ մաքուր տարածքում, որից զգալիորեն կախված է արտադրանքի որակը:

Թոչունների կերակրման համար օգտագործվող կերերից եգիպտացորենը, ցորենը և բուսական յուղը մթերվում են ԱՀ տարածքում արտադրող ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Ընդ որում համակցված կերի մնացած բաղադրամասերը, որոնք ձեռք են բերվում ԱՀ տարածքում, կազմում են կերի ավելի քան 60 %-ը: Իսկ մնացած մասը և համակցված

կերի մնացած բաղադրամասերը ձեռք են բերվում ՀՀ տարածքի կազմակերպություններից:

Ընկերության առկա աշխատանքային ռեսուրսների, աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդի օգտագործման, աշխատավարձի ֆոնդի և միջին ամսական աշխատավարձի ցուցանիշների մասին պատկերացում կազմելու համար ներկայացնենք աղյուսակ 1-ը.

Աղյուսակ 1

«Լուսակերտ» ՍՊԸ-ի աշխատանքային ռեսուրսները 2020-21թթ.[1]

Հ/հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	Տարիներ	
			2020թ.	2021թ.
1	2	3	4	5
1.	Ընդամենը աշխատանքային ռեսուրսներ	մարդ	148	144
2.	Տարվա ընթացքում նրանք աշխատել են ընդամենը	մարդ-օր	44992	43776
3.	Մշտական մեկ աշխատողը տարեկան աշխատել է	օր	304	304
4.	Աշխատողների կազմը			
	- բանվորներ (մշտական)	մարդ	144	140
	- կառավարման ապարատի աշխատողներ	մարդ	4	4
5.	Տարեկան աշխատավարձի ֆոնդը	մլն. դրամ	202.6	236.6
6.	Միջին ամսական աշխատավարձը	հազ. դրամ	114.1	136.9

Անասնաբուծությունում աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդը կարող է հասնել մինչև 300 օրվա: Քանի որ թռչնաբուծությունը անասնաբուծության կարևորագույն ճյուղերից է, հետևաբար ընկերությունում աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդի օգտագործումը բարձր է. այն կազմել է 101.3 %:

Տարեկան աշխատավարձի ֆոնդը իր մեջ ներառում է միայն հիմնական աշխատողների աշխատավարձը: Աղյուսակի տվյալներից երևում է, որ ընկերության աշխատողների միջին ամսական աշխատավարձը բարձրացել է՝ 114.1 հազ. դրամից հասնելով 136.9 հազ. դրամի: Աշխատողների միջին տարեկան թիվը նվազել է 4 մարդով:

2. Թռչնաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպումը «Լուսակերտ» ՄՊԸ-ում

Թռչնաբուծական արտադրանքի արտադրության տեխնոլոգիական ցիկլն սկսվում է ինկուբացիոն կայանից, որի համար Վրաստանի և ՀՀ-ի թռչնաֆարիկաներից ներմուծվում է բրոյլեր տեսակի թռչնի ինկուբացիոն ձու: Ինկուբացիայի ժամանակահատվածը կազմում է 21 օր 8 ժամ, որից հետո ինկուբատորից հանված մեկ օրական ճտերի խմբաքանակը տեղափոխվում է ըստ արտադրական ծրագրի նախապատրաստված հերթական թռչնանոց, որտեղ էլ աճեցվում են 35-40 օր, որից հետո, ըստ իրացման բաժնի կողմից ներկայացված պահանջարկի, օրական որոշակի քանակությամբ ուղարկվում է մորթի արտադրամաս՝ մորթման, մաքրման, սառեցման, փաթեթավորման և իրացման բաժին՝ առաքման համար: Մեկ խմբաքանակի մորթման ժամկետը կազմում է 15 օրացուցային օր: Թռչնանոցում աճեցման ժամանակաշրջանը և օրական մորթվող թռչնի քանակը կախված է տարվա տվյալ ժամանակաշրջանում թռչնամսի շուկայում տիրող իրավիճակից և պահանջարկից:

Թռչունների ջրամատակարարումը և կերամատակարարումը ավտոմատացված են, մորթի արտադրամասում թռչնի մորթը, փետրահանումը և կերի արտադրամասում համակցված կերի պատրաստումը մեքենայացված են:

Ընկերության կողմից աճեցվող ROSS 308 տեսակի բրոյլեր թռչունը ունի մթերատվության նորմատիվային ցուցանիշներ, որոնք ձեռք են բերվում գլխաքանակի պահպանման օպտիմալ պայմաններում՝ օգտագործելով արդյունավետ տեխնոլոգիա: Նորմատիվային ցուցանիշների վրա կարող են ազդել հետևյալ գործոնները.

- կերի հասանելիությունը, որը կարող է սահմանափակել սննդարար էլեմենտների մարսելիության մակարդակը,
- էքստրեմալ կլիմայական պայմանները, որոնք կարող են իջեցնել մթերատվությունը,
- տնտեսական նախադրյալները, որոնք կարող են սահմանափակել արտադրության համակարգի ընտրությունը: Այսինքն՝ մթերատվության միջին ցուցանիշները կարող են ցածր լինել նորմատիվային ցուցանիշներից:

ROSS 308-ը ուժեղ, արագ աճող բրոյլեր թռչուն է. ունի արդյունավետ կերակոնվերսիա և բարձր մսային ցուցանիշներ: Թռչնամսի արտադրության տնտեսական արդյունավետությունը կախված է արտադրության

բարձր մթերատվությունից, որին հասնելու համար կարևոր է տեխնոլոգիայի պահպանումը:

Ընկերության արտադրական ստորաբաժանումները հիմնականում ապահովված են ժամանակակից սարքավորումներով, որոնց շնորհիվ աշխատանքները հիմնականում մեքենայացված են:

Ամռանը, շոգի պատճառով, հնարավոր չէ ճտերի աճեցումը թռչնանոցում թռչնի բարձր խտության պայմաններում: Այդ իսկ պատճառով միևնույն թռչնանոցը տարվա տարբեր ժամանակաշրջաններում համարվում է տարբեր թվաքանակ ունեցող խմբաքանակներով:

Կախված տարվա տարբեր ժամանակաշրջաններից՝ մեկ խմբաքանակ մեկ օրական ճուտ ստանալու համար ինկուբացվում է 29.000-34.000 ինկուբացիոն ձու, որից ստացվում է միջին հաշվով 23.000-27.000 մեկ օրական ճուտ:

Ներկայումս ընկերության ինկուբացիոն կայանում յուրաքանչյուր ամիս ինկուբացիայի է ենթարկվում 2-2,5 խմբաքանակ՝ տարեկան կտրվածքով 24-30 խմբաքանակ: Ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ են աշխատում ընկերության 6 թռչնանոցները, որոնցից չորսում տեղադրված են Բելգիայի արտադրության լրիվ ժամանակակից սարքավորումներ՝ կերի և ջրի մատակարարման համար:

Կախված թռչնամսի շուկայի պահանջարկից՝ թռչունը մորթվում է 1.8-2.2 կգ կենդանի քաշի դեպքում, երբ մեկ գլուխ թռչնից ստացվում է 1.3-1.6 կգ մաքուր միս:

Հետազոտության արդյունքները և վերլուծությունը

Թռչնաբուծական արտադրանքի արտադրության տնտեսական արդյունավետության վերլուծությունը «Լուսակերտ» ՍՊԸ-ում

Մարտունու «Լուսակերտ» ՍՊԸ-ն թռչնաբուծական արտադրանքի արտադրության տնտեսական արդյունավետության վերլուծության նպատակով ներքոհիշյալ աղյուսակով ներկայացնենք տնտեսական արդյունավետության ցուցանիշները 2020-21 թթ. համար (աղ. 2):

**«Լուսակերտ» ՄՊԸ-ն տնտեսական արդյունավետության
ցուցանիշները 2020-21թթ. [2]**

Հ/Հ	Ցուցանիշները	2020թ.	2021թ.	Աճի տեմպը (%)
1	Համախառն արտադրանքը (հազ. դր.)	1098600.0	1134700.0	103.3
2	Նյութական ծախսերը (հազ. դր.)	567960.0	645490.0	113.7
3	Համախառը եկամուտը (հազ. դր.)	530640.0	489210.0	92.2
4	Արտադրական ծախսերը (հազ. դր.)	702540.0	788390.0	112.2
5	Զուտ եկամուտը (հազ. դր.)	396060.0	346310.0	87.4
6	Իրացման ծախսերը (հազ. դր.)	72745.0	76680.0	105.4
7	Լրիվ ինքնարժեքը (հազ. դր.)	775285.0	865070.0	111.6
8	Իրացումից ստացված հասույթը (հազ. դր.)	1062998.0	1245534.0	117.2
9	Շահույթը (հազ. դր.)	287713.0	380464.0	132.2
10	Շահութաբերության մակարդակը (%)	37.11	43.98	118.5
11	Աշխատանքի արտադրողականությունը մեկ աշխատողի հաշվով (հազ. դր.)	7423.0	7879.9	106.2
12	Աշխատանքի արտադրողականությունը աշխատանքային ծախսումների միավորի հաշվով (հազ. դր.)	24.4	25.9	106.2
13	Աշխատատարությունը (մարդ-օր)	0.041	0.039	95.1

Վերը նշված աղյուսակի տվյալներից պարզվում է, որ նախորդ տարվա համեմատ 2021-ին.

- նյութական ծախսերը աճել են 13.7 %-ով, որը բացասական երևույթ է, քանի որ չնայած արտադրանքի ծավալը աճել է 3.3 %-ով, սակայն միաժամանակ 9.6 %-ով աճել են միավոր արտադրանքի վրա կատարված նյութական ծախսերը,

- համախառն եկամուտը նվազել է 7.8 %-ով: Քանի որ համախառն եկամուտը կազմակերպության կողմից տնօրինվող եկամուտն է և օգտագործվում է երկու նպատակով՝ աշխատանքի վարձատրության և կուտակման, հետևաբար համախառն եկամտի նվազումը իր բացասական ազդեցությունն է գործում աշխատանքի վարձատրության և կուտակման ֆոնդերի վրա,
- արտադրական ծախսերը աճել են 12.2 %-ով, որը բացասական երևույթ է, քանի որ չնայած արտադրանքի ծավալը աճել է 3.3 %-ով, սակայն միաժամանակ 8.8 %-ով աճել են միավոր արտադրանքի վրա կատարված արտադրական ծախսերը,
- զուտ եկամուտը նվազել է 12.6 %-ով, որը բացասական երևույթ է, քանի որ չնայած համախառն արտադրանքը աճել է 3.3 %-ով, սակայն միաժամանակ 8.8 %-ով աճել են նաև միավոր արտադրանքի վրա կատարված արտադրական ծախսերը,
- իրացման ծախսերը աճել են 5.4 %-ով, որը բացասական երևույթ է, քանի որ չնայած արտադրանքի ծավալը աճել է 3.3 %-ով, սակայն միաժամանակ միավոր արտադրանքի հաշվով իրացման ծախսերը աճել են 3.0 %-ով,
- իրացումից ստացված հասույթը աճել է 17.2 %-ով, որը դրական երևույթ է: Իսկ աճը գրանցվել է ի հաշիվ գնաձի,
- շահույթը աճել է 32.2 %-ով, իսկ շահութաբերության մակարդակը աճել է 18.5 %-ով, որը դրական երևույթ է,
- մեկ աշխատողի հաշվով աշխատանքի արտադրողականությունը աճել է 6.2 %-ով, որը դրական երևույթ է կազմակերպության համար, քանի որ աշխատողների միջին տարեկան թիվը նվազել է 4 մարդով, իսկ արտադրանքի ծավալը աճել է 3.3 %-ով,
- աշխատանքի արտադրողականությունը աշխատանքային ծախսումների միավորի հաշվով աճել է 6.2 %-ով, որը դրական երևույթ է, քանի որ աշխատանքային ծախսումները նվազել են 2.7 %-ով, իսկ արտադրանքի ծավալը աճել է 3.3 %-ով,
- միջին ամսական աշխատավարձը աճել է 20 %-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը մեկ աշխատողի հաշվով աճել է 6.2 %-ով, որը ցանկալի չէ, քանի որ աշխատավարձի աճի տեմպը գերազանցել է աշխատանքի արտադրողականության աճի տեմպին:

Եզրակացություն

ԱՀ Մարտունու «Լուսակերտ» ՍՊԸ-ն թռչնաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման կատարելագործման և տնտեսական արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք.

1. բարձրացնել արտադրության մթերատվությունը՝ պահպանելով տեխնոլոգիայի հետևյալ ասպեկտները.
 - օպտիմալացնել ճտերի որակը, օգտագործելով ինկուբացիայի, պահպանման և տեղափոխման արդյունավետ տեխնոլոգիական մեթոդներ,
 - ստեղծել ճտերի վաղ աճեցման պայմաններ,
 - օգտագործել հեշտ մարսվող ստարտային կեր, որը պետք է ունենա աննդարար էլեմենտների օպտիմալ բալանս,
 - ճտերը պահպանել օպտիմալ ջերմաստիճանային ռեժիմում,
 - պահպանել սանհիտարահիգենիկ բարձր ռեժիմ՝ հիվանդությունների ռիսկը իջեցնելու համար,
2. բարձրացնել թռչունների արդյունավետության ցուցանիշը, որի համար անհրաժեշտ է բարձրացնել թռչունների պահպանման սոկոսը և մեկ գլուխ թռչնի միջին կենդանի քաշը, նվազեցնել մորթի սկզբին թռչնի տարիքը և մեկ կիլոգրամ կենդանի քաշի արտադրության վրա ծախսված կերը,
3. նվազեցնել միավոր արտադրանքի արտադրության և իրացման վրա կատարվող նյութադրամական ծախսերը,
4. բարձրացնել աշխատանքի արտադրողականության աճի տեմպը աշխատանքի վարձատրության աճի տեմպի համեմատ,
5. ԱՀ կառավարության կողմից մշակել համապատասխան ծրագրեր ընկերությունում օգտագործվող կերաբաղադրամասերից բուսական յուղը, արևածաղկի և սոյայի շրոտը ԱՀ տարածքում ամբողջությամբ ձեռք բերելու ուղղությամբ,
6. կատարելագործել արտադրանքի իրացման ուղիները:

Գրականություն

1. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի «Լուսակերտ» ՄՊԸ Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին Ձև1-Ա» 2021թ. տարեկան հաշվետվություն:
2. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի «Լուսակերտ» ՄՊԸ «Տնտեսական գործունեության ցուցանիշների մասին Ձև1-ՏԳ» և «Հիմնական ֆինանսական ցուցանիշների մասին Ձև1-Ֆ» 2021 թ. տարեկան հաշվետվություններ:
3. Դավթյան Գ., Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում, Եր., 2004, 431 էջ:
4. Հակոբյան Լ., Ճեպեճյան Շ., Գյուղատնտեսության էկոնոմիկա, Երևան, 2012, 265 էջ:
5. Հակոբյան Լ., ՀՀ ագրարային աշխատանքի էկոնոմիկա, Երևան, 2014, 327 էջ:
6. Ղազարյան Է., Գյուղացիական տնտեսության կազմակերպում, Եր. 2012, 220 էջ:
7. Малыш М., Аграрная экономика, Санкт-Петербург, 2002.- 688 с.
8. Коваленко Н., Экономика сельского хозяйства, Москва, 2004.-364 с.
9. <http://www.agroecoarm.com/> ,
10. <https://www.animalmarket.am/> ,
11. <http://www.vesti.belal.by/>:

**Пути совершенствования организации птицеводства и
повышения экономической эффективности в Республике Арцах
в ООО “Лусакерт” Мартунинского района**

*Арутюнян Сусанна
Арутюнян Ирина
Барсегян Людмила
Долуханян Нелли*

Резюме

***Ключевые слова:** трудовые ресурсы, производительность труда, продуктивность, валовая продукция, валовой доход, прибыль, чистый доход, уровень рентабельности*

Для выполнения цели исследования, нами была изучена производственно-хозяйственная деятельность предприятия.

За исследуемый период представлены имеющиеся трудовые ресурсы предприятия, показатели использования годового фонда рабочего времени, фонд оплаты труда и среднемесячная заработная плата. Изучено текущее состояние организации производства продукции птицеводства компании.

За исследуемый период проведен анализ экономической эффективности производства продукции птицеводства. В основу анализа положены натуральные и стоимостные показатели, характеризующие экономическую эффективность предприятия по производству продукции птицеводства. Натуральный показатель, комбикорм для бройлеров, был положен в основу расчета стоимостных показателей: валового продукта, валового дохода, чистого дохода, прибыли и рентабельности.

В результате анализа выявлены допущенные упущения, причины снижения организации производства продукции птицеводства и экономической эффективности в текущих условиях.

Таким образом, по результатам анализа мы выяснили, что хотя объем выпуска продукции за исследуемый период увеличился, но одновременно увеличились производственные, материальные и сбытовые затраты на единицу продукции, что противоречит эффективной организации производства. Оно должно быть направлено на наиболее рациональное и эффективное использование производственных ресурсов.

Увеличение издержек производства на единицу продукции привело к уменьшению чистого дохода, а чистый доход является основным источником дальнейшего расширенного воспроизводства и роста общественного

фонда спроса.

Хотя по результатам анализа предприятие имело прибыль в исследуемый период времени и считалось прибыльным, однако увеличение себестоимости продукции и себестоимости реализации на единицу продукции негативно сказалось на размере прибыли.

То есть чем выше масса прибыли, тем больше возможности расширенного воспроизводства.

Поскольку основным экономическим показателем, характеризующим эффективность использования трудовых ресурсов, является производительность труда, мы рассчитали этот показатель для исследуемого периода времени. По результатам анализа мы выяснили, что в расчете на одного работающего, производительность труда хотя и увеличилась, но и среднемесячная заработная плата работников за тот же период увеличилась, причем ее рост превысил рост производительности труда, что нежелательно, так как рост производительности труда должен превышать темпы роста заработной платы.

**Ways to improve the Organization of Poultry Farming
and increase Economic Efficiency in the Republic of Artsakh
in “Lusakert” LLC of Martuni Region**

*Harutyunyan Susanna
Harutyunyan Irena
Barseghyan Lyudmila
Dolukhanyan Nelly*

Summary

Key words: *labor resources, labor productivity, productivity, gross output, gross income, profit, net income, profitability level*

We have studied the production and economic activity of the company to fulfill the purpose of the research.

For the period of our study, the available labor resources of the enterprise, indicators of the use for annual working time fund, the salary fund and the average monthly salary are presented.

The current state of the company’s poultry production organization has been studied.

During the study period, an analysis of the economic efficiency of poultry production was carried out. The analysis was based on natural and cost indicators characterizing the economic efficiency of an enterprise for the production of poultry products. The natural indicator, broiler feed, was used as the basis for calculating the cost indicators: gross output, gross income, net income, profit and profitability.

As a result of the analysis, we identified our mistakes, the reasons for the decline in the organization of poultry products’ production and the economic efficiency under the current conditions.

Thus, according to the results of the analysis, we have found out that although the production volume increased, production, material and sales costs per unit of product also increased, which contradicts the effective organization of production. It should be aimed at the most rational and efficient use of production resources.

The increase in production costs per unit of output has led to a decrease in net income, and net income is the main source of further expanded reproduction and growth in the public demand fund.

Although, according to the results of the analysis, the enterprise had profit that’s why it was considered profitable, however the increase in production

costs and sales costs per unit of product negatively affected the amount of profit.

That is, the higher the mass of profit, the greater the possibilities of extended reproduction.

Since the main economic indicator characterizing the efficiency of the use of labor resources is labor productivity, therefore, we calculated that indicator as well. Based on the results of the analysis, we found out that, although labor productivity increased, the average monthly salary of employees also increased in the same period, and its increase exceeded the increase in labor productivity, which is not desirable, because the growth of labor productivity should exceed the growth rate of wages.

Ներկայացվել է	24.08.2022 թ.
Գրախոսվել է	12.09.2022 թ.
Ընդունվել է տպագրության	25.11.2022 թ.